ցէ՛ք, քէրէմ արէ՛ք, ասելով զձեռն ի դուռն Սուրբ Նիկողոսի զարնէ և երդուի չարաչար. Երթամ ասեմ՝ Էլ գնա՛յ, էլ գնա՛յ. և այնքան ժողովուրդք առաջի նորա և զկնի կանգնեալ զամէնն ասեն, հազիւ հաւատան. եւ ինք պրծանի ի ձեռաց նոցա այսու։ Եւ անդ ի Պալատ մեր եկեղեցոյ չարքն երթան առ Մուղնեցին և ասեն. Ո՞ւր գնաս, ո՞վ կարող է հանել զքեզ ի տեղէս, մեք կանգնած եմք։ Նոյնպէս եւ Յակոբն բազում հայհոյանս տայ Եղիազարի և Մարտիրոսի և ասէ. Ես զգլուխս իմ, զտուն եւ զորդիս եւ զստացուածս ի քո ճանապարհն եդեալ եմ, ամուր կա՛ց։

Բշի (11 Փեբր.). Ի խանն մուշավէրէ կ՚առնեն, ապա Խանճին եւ Տաւութն եւ առաքեն մարդ թէ Էլ եւ գնա՛յ՝ Մուղնեցուն։

Դշի (12 Փեբր.). Խորհուրդ արար Եղիազար վարդապետն մերայնօքս, գրեցին թուղթ մի թէ Մեք քաղաքացիքս յամէն եկեղեցեաց ուրոյն ուրոյն հնազանդեմք թագաւորին խէթիշէրիֆին, որ ի մեր քաղաքս սեագլուխ պատրիգ կամ առաջնորդ անունով չկոխէ եւ չպահենք. եւ զայս թուղթն մօհրեցաք. Ով չմոհրէ, տամք ի ձեռս բռնաւորաց որ հախէն գան։ Եւ նոքա զայս լըւեալ՝ ուղարկեցին զՄուղնեցին յՈւսկիւտարն ասելով. Գնա՛յ եւ ժամանակ մի չրջեաց, մինչեւ տեսցուք թէ զի՛նչ լիցի։ Դէպ լուսոյ Դշի աւուրս երոցք եղև ի վերուստ կողմանէ Ղատրղայ իլիմանին՝ մօտ առ Փէյիկխանան եւ մարեցին։

Դշի աւուրս (13 Փեբր.) Վարդապետն ի Ղազիէսքէրքն մտանէր և ի սուլթան քէհեասին և յայլ դրունս մեծամեծացն չրջէր։ Երեկոյիս Տեառնընդառաջ։ Յաւուրքս Դ զալպազան կախեցին զօլօթի կտրող, եւ մինն տէվրիշ էր և կարդացող, որ ի Սուլթան Պայազիտն կախեցին ի ծառին իւր հանդերձիւն։ Յաւուրքս Հոռոմքն գնային եւ գային միջնորդօք թէ Հաշտիմք